Հարցեր և առաջադրանքներ

1. Ուսումնասիրիր և ճանաչիր գրողի ապրած ժամանակաշրջանը:
2. Ներկայացրու գրողի կենսագրությունը, հուշեր նրա մասին:
3. Գնահատիր գրող-քաղաքացուն, նրա ծավալած գործունեությունը ազգային արժեքների և գաղափարախոսության պահպանման, զարգացման և տարածման գործում:
4. Ստեղծիր սահիկաշար, տեսաֆիլմ և այլն՝ ելնելով Նար-Դոսի կենսագրությունից:
5. Մեկնաբանիր նրա հոգեբանական ռեալիզմի առանձնահատկությունները «Աննա Սարոյան» վիպակում:
6. Պարզաբանիր՝ «Մեր թաղը» նովելաշարում քաղաքային կյանքին անդրադառնալիս հեղինակը ինչպես է ընդհանրացնում արհեստավորների կյան-քի զանազան երևույթները:
7. Զուգորդիր այդ ստեղծագործությունների բովանդակությունը քեզ ծանոթ այլ ստեղծագործության հետ, գտիր նմանություններ և տարբերություններ:
8. Ներկայացրու «Սպանված աղավնին» երկի գրության շարժառիթը:
9. Ներկայացրու երկի ստեղծման պատմությունը և ստեղծագործության գաղափարը:
10. Բացատրիր գրական երկի բովանդակության հիմնական և հարակից գաղափարական հարցադրումները՝ բերելով համապատասխան օրինակներ և փաստեր տվյալ ստեղծագործությունից:
11. Վերլուծիր գրական կերպարի զարգացման քայլաշարը:
12. Զուգահեռներ անցկացրեք Սառայի, Նար-Դոսի «Ադամամութին» պատմվածքի Շուշանիկի և Գր. Զոհրապի «Փոստալը» նովելի հերոսուհու՝ Տիգրանուհու միջև: Ու՞մ եք մեղադրում (խմբային աշխատանք):
13. Բեր վիպակից տողեր, որոնք արտահայտում են մարդկային բարոյական վեհ արարքներ, ինչպես՝ ազնվություն, նվիրվածություն, փոխադարձ հարգանք, պարտականության գիտակցումը և այլն:
14. Հորինիր մենախոսություն, երկխոսություն, հարցազրույց գրողի հետ:
15. Գրիր ստեղծագործական փոխադրություն գրական երկի թեմաներով:
16. Վերլուծիր գրական տեքստերը՝ ըստ ժանրային առանձնահատկությունների:
17. Ուսումնասիրիր «Սպանված աղավնին» վիպակը, օրինակներով ներկայացրու հեղինակի լեզվի և ոճի առանձնահատկությունները:
18. Բացատրիր տվյալ երկի հեղինակի ընտրած ոճական միջոցների բազմազանությունը:
19. Մեկնաբանի գրողի կիրառած ոճական միջոցների ընտրության ազդեցությունը ընթերցողի զգացմունքների և մտածողության վրա:
20. Վիպակն ընթերցելիս քեզանում զարգացրու արդարամտության, լայնախոհության, հավասարակշռվածության, նպատակաուղղվածության, համարձակության, ազնվության, կարեկցանքի, համառության դրսևորումներ:
21. Հորինիր պատում՝ որպես վերնագիր կամ բնաբան կիրառելով վիպակից վերցված որևէ բառ, բառակապակցություն կամ նախադասություն՝ կիրառելով հարուստ բառապաշար և արտահայտչամիջոցներ:
22. Ձևակերպիր հարց, կազմի պլան, ըստ դրանց գրիր վերլուծական շարադրանք, էսսե,

ակնարկ, հոդված՝ կապված վիպակի բովանդակության հետ:

23. Ստեղծագործաբար վերարտադրի գրական երկի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստից ընտրած արտահայտչամիջոցները:
24. Գրավոր պատասխանի՛ր հարցերին՝ կատարելով անհրաժեշտ մեկնաբանություններ:
25. Գնահատրի՛ր հայ և համաշխարհային գրականության լավագույն երկերի բովանդակության իմացությունը և գաղափարական ըմբռնումը որպես ինքնաճանաչման, սեփական անձի, աշխարհայացքի ձևավորման և ազգային մշակութային արժեքների պահպանման, հետագա զարգացման կարևոր պայման:
26. Դրսևորի՛ր պատասխանատու վերաբերմունք հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների պահպանման, զարգացման, արժևորման գործում: